



ՀԱԿՈՐ ԱՐԱՄՅԱՆ

**ՄԵԿ ՔԱՆԻ ԺԱՄ Ս. ԷԶՄԻԱԾՆԻ
ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ**



արիները ինչքան արագ են անցել այն պատմական, անմոռանալի օրերից. երբ պաղթաշխարհի բոլոր ծայրերից եկած պատգամավորներս Սովետական Հայաստանի և հղորայրական ռեսպուբլիկաների բոլոր թեմերից եկած պատգամավորների հետ միասին պիտի ընտրենք Մայր Աթոռ Ս. էջմիածնի նոր գահակալը:

Տորս տարի և մեկ քանի ամիս են անցել այն պատմական, անմոռանալի օրերից. երբ պաղթաշխարհի բոլոր ծայրերից եկած պատգամավորներս Սովետական Հայաստանի և հղորայրական ռեսպուբլիկաների բոլոր թեմերից եկած պատգամավորների հետ միասին պիտի ընտրենք Մայր Աթոռ Ս. էջմիածնի նոր գահակալը:

Տարիներն անցել—գնացել են երազի պես արագ, բայց միաժամանակ կուռ և արդյունալի: Ինչպատճեն հակայական փոփոխություններ մեր կյանքում՝ 1945 թվի հունիս—հուլիսի այն օրերից իվեր...

Այն օրերին դեռևս պատերազմը չէր դադարել, և մեր մեծ Հայրենիքի հերոսական ժողովուրդը առմեն ինչ ռազմաճակատի համար» լոզունգով լարել էր իր ուժերը վերջնական հաղթանակի համար: Իսկ այսօր, վերահաստատված խաղաղության պայմաններում, այդ միենալուն հերոսական ժողովուրդը արագ թափով կենսագործում է Ստալինյան հետպատերազմյան հնգամյա պլանը: Այժմ մեր մեծ երկիրը դարձել է ավելի ամրախարիսխ, ավելի պողպատակուր քան երբեք: Այժմ արվում է ամեն ինչ թանկ գնված խաղաղության պաշտպանության, արվում է ամեն ինչ, որպեսզի մեր ժողովուրդի կյանքը դառնա ավելի բարոր, ավելի երշանիկ, քան երբեք: Ես հավատացած եմ, որ այն բոլոր այցելուները, որոնք այստեղ էին 1945 թվի պատերազմական օրերին,

եթե այժմ լինեն երևանում, այլևս չեն ճանաշի իրենց տեսած մայրաքաղաքը:

Այն օրերին հայրենադարձությունը գնում է մեկ վառ իզգ էր, մեկ ակնկալություն միայն, իսկ այժմ, շնորհիվ մեր երկրի իշխանության և ժողովրդի, և անձամբ հանձարեղ առաջնորդի հոգատարությանը, տասնյակ հազարներով պանդում հայերի հայրենադարձությունը իրականություն է:

Այն օրերին, իմ սեփական Հայրենիքում, իմ սեփական տան մեջ՝ ժամանակավոր աշերտի, անցորդի հանգամանք ունեի միայն, իսկ այժմ, շնորհիվ հայրենադարձության մեծ շարժումն, ինչու էլ մեկն եմ հազարավոր այն ներգաղթողներից, որոնք դարձել են Սովետական Հայաստանի միհրավ քաղաքցիներ:

Եվ ահա, աշնանամուտի այս լուսապայծառ օրը, անցել եմ մեր մայրաքաղաքը էջմիածնի խճուղուն կապող Հաղթանակի կամրջով, և մեկ սիրունատես «Մոսկվիչ» մարզաւար ավտոմեքենայով գնում եմ էջմիածնին: Աշնանային պայծառ արև է: Խճուղու երկու կողմը ամառային պերճ բռնականությամբ է ծածկված. գեղեցիկ է, ընդհանրապես, Արարատյան դաշտի աշունը Եվ հիասքանչ նայում եմ՝ մերթ ակնապարար, վճիռ-կապույտ երկնքին, մերթ սպիտակափառ Մասիսին, մերթ Արագածի կոթողացած շրու գագաթներին, և մերթ է, իմ անմիջական շրջապատին:

Խինդաշաղախ տրամադրությամբ, ուրախ մտորումներով, ապակու պես ողորկ ճանապարհի վրա սահող «Մոսկվիչ» մեջ նստած, շարունակում եմ մտովի զուգակշիռն անել անցյալ և ներկա պայմանների:

Այն օրերին, Հենց այս Հաղթանակի կամուրջը, որի վրայով սահեց — անցավ ավտոն, չկար տակապին, ավելի ճշշտ՝ կառուց

ժան պրոցեսի մեջ էր միայն։ Իսկ հիմա, իր բարձր կամարներով, հսկայական լայնք ու երկայնքով, հանդուզն ու հզոր կառուցվածքով՝ իր անվան արժանի հոյակապ մեկ կոթողացում է Նրևանի տեսարժան վայրերից մեկը։

Այս օրերին, երբ կաթողիկոսական ընտրովիանց տարեգրությանց մեջ իր նախընթացը շոնէցող մեկ կերպով, այսինքն՝ հայրենական թե սիյուռքային բոլոր թեմերի պատգամավորներին բացարձակ համակամությամբն ու միաձայնությամբը Ազգընտիր Տեղակալը Ամենայն Հայոց Հայրապետ ընտրվեց՝ Էջմիածնի Հոգևոր ճեմարանի վերաբացումը նորընտիր Հայրապետի ծրագրից մեկն էր միայն։

Իսկ այժմ, այդ ծրագիրը իրականություն է արդեն։ Ճեմարանը բոլորի է շորս տա-

րից ներս, կանգ է առնում Էջմիածնի նախկին մատենադարանի երկհարկ շենքի առջև, ուր 1945 թվի աշնանից իվեր տեղափորված է վերաբացված հոգևոր ճեմարանը։ Այս շենքի ընդարձակ դահլիճներից մեկումն էր, որ տեղի ունեցան համագումարի նիստերը։

Ճեմարանի պարապմունքները շեն սկսվել դեռևս այս ժամին, և վայելու, մաքուր համազգեստներ հագնված առողջակազմ, կայտառ պատանիներ և երիտասարդներ ըզբունում են վանքի ծառազարդ, ծաղկազարդ պարտեզներում, կամ կանգնած մոնումենտալ դարպասների առաջ՝ զրուցում են իրարհետ՝ ժամանակակից մասնակից այդ շնորհալի տղաները։

Առաջնորդվում ենք ճեմարանի վերատեսուչ, հայտնի մտավորական-մանկավարժ-



Էջմիածնի ձեռնադրված նինգ սարկավագները միաբանության անդամների և հոգեւոր նեմարանի տեսուչ Մինասյանի հետ միասին։

բեշրջան, և աշնանամուտի այս օրերին, նա գտնվում է իր գոյության հինգերորդ տարվա սեմին։

Այսօր, որոշել ենք այցելություն տալ Հոգևոր ճեմարանին։

... Իրոք, տարիներն ինչքա՞ն արագ են անցել—գնացել, բայց միաժամանակ՝ ինչքան կուռ և արդյունալի։

* * *

Ավտոն անցնում է նախկին Գևորգյան ճեմարանի կարմրավոն, ընդարձակ շենքի առջևից և մտնելով Էջմիածնի պարիսպնե-

Մինաս Մինասյանի առնաձնասենյակը՝ 3-րդ հարկի վրա։ Բոլոր հարկերի որմերը զարդարված են աստվածաշնչական պատկերներով. զգում ես իսկույն, որ գտնվում ես կրոնական հաստատության մեջ։ Ուշագրավ մաքրություն, անդորրություն է ամենուրեք, որ պատիվ է բերում և՛ ճեմարանի ղեկավարությանը, և՛ սաներին։

Ներս ենք, մտնում վերատեսչի ընդարձակ, լավ կահավորված ու կոկ առանձնասենյակը՝ ուսաճելի անակնկալը պատճառելով՝ իրեն, ինչպես ինքն է ասում։

Ընկեր Մինասյանի հետ «Հին» ժանութներ ենք, դեռ 1945 թվից։ Նա հայրաստանյան թեմերից մեկի պատգամավորներից էր կաթողիկոսական ընտրությանը և համագումարի կողմից ընտրվել էր Հոգևոր Գերագույն Խորհրդի անդամ՝ հանգ. Ստ. Մալխասյանցի, Երվանդ Շահազիզի և Ստ. Կամսարականի հետ։

Հոգվ խրախոսիշ է այն անձնիր, չերմ և անդուզ հոգատարությունը, որ Վեհափառ Հայրապետը ցուցաբերում է Հոգևոր ճեմարանի նկատմամբ։ Չնայած իր զբաղմունքներին և ծանրաբեռնվածությանը, ալեզարդ Հայրապետը հաճախ է լինում ճեմարանում, լսում դասերը՝ հատուկ ուշադրություն դարձնելով կրոնագիտական և փիլիսոփայական ուսմունքների դասավանդման վրա՝ դասախոսներին տալով մեթոդական և այլ կարգի ցուցմունքներ։ Վերատեսություն և դասախոսները մեծ շափով օգտվում են Վեհափառի հայրական ճեռնահաս ղեկավարությունից։ Նա անձամբ ժանութ է լուրաքանչյուր սանի ընդունակության և հակումների հետ։

Վեհափառը համարյա միջտ ներկա է լինում սաների կողմից կազմակերպված գրական-գեղարվեստական երեկովթյուններին, ինչպես նաև տարեկերգին քննություններին՝ գործալից հոգատարությամբ շրջապատելով սաներին և գաջալերելով նրանց։

Պիտի ավելացնել, որ Հոգևոր ճեմարանի սաների համար իմաստ քաջալերական կարող է լինել բարերարների հետ ունեցած իրենց թղթակցությունը։ Սաներից ոմանք թղթակցում են իրենց բարերարների հետ։

Ավելորդ շեր լինի, ընթերցողներին ժանութացնեի այս իմ հին ժանութիւն հետ։

Մ. Մինասյանը նախկին տաճկահայ է. ծնվել է Կյուրին, 1892 թվին։ Հայրը գոհվել է 1895 թվի կոտորածներին...։ Երկու տարի սովորել է իր ծննդավայրի որրանոցում, ապա՝ տեղի ազգային մարժարանում և Մարզկանի ամերիկյան գոլեմում և Պոլսի Ռոպերթ գոլեմում։ Վերջում բարձրագույն ուսում է ստացել Պոլսի համալսարանի իրավաբանական ֆակուլտետում և մավրուել 1914 թվին։ 1923 թվին, երբ Պոլսի հայ մտավորականությունը ցրվում էին զանազան գաղութներ, Մինասյանը՝ նախընտրում է անցնել ազատագրված հայրենի երկիրը և ժառայել իր հարազատ ժողովրդին։

Գալով Հայրենիք, սկզբում նա դասախոսում է Երևանի Բանֆակում (բանվորական ֆակուլտետ), իսկ հետագայում դասախոսում Երևանի Պետական Մանկավարժական ինստիտուտ, Պետական համալսարանում, որպես մանագետ անգերենի, թրքերենի և

աշխարհագործյան։ Անգերենից թարգմանել է Հովսեփի եմինի «Կյանքը և արկածները» աշխատությունը, լավ ընտանիքի հայր է, ունի շորս զավակներ։

Գիշերօթիկ կրթական այնպիսի մի հաստատություն, ինչպիսին ճեմարանն է, պետք է ունենար լայն կենսափորձով և մանկավարժական պատրաստվածությամբ այնպիսի տեսուչ, ինչպիսին ընկ. Մինաս Մինասյանն է։ Ճեմարանը գտնվում է լավ, գորգություն, հայրական ճեռներում։

Ընկեր Մինասյան, — դիմում եմ վերատեսչին, նստելով նրա կողքին, իր աշխատության գրասեղանի առջև, ինձ առաջարկված բազկաթուում, — Հայաստանի և եղբայրական սեսպուդիկաների թեմերի ժողովրդից ցանկացողները միշտ էլ անձամբ կարող են գալ, հետաքրքրվել ճեմարանով, տեսնել ձեր աշխատանքը, ձեր գործը, բայց Սվյուտքի հայերը շունեն այդ հնարավորությունը. ուստի ես նպատակահարմար համարեցի գալ անձամբ տեսնել թե ի՞նչ վիճակումն է ճեմարանը և ուշմիածին» ամսագրի մեջ գրել իմ տպագրությունները։

— Լավ մտածում եք ունեցել, — պատասխանում է վերատեսուչը, — պատրաստ եմ ձեզ հաղորդել բոլոր ձեր ցանկացած տեղեկությունները. կարող եք ներկա լինել դասախոսություններին, տեսնել ննջարանները, ճաշարանը, ինչ որ ցանկանաք։

Առաջին հերթին հետաքրքրվում եմ դասախոսական կազմով։

Ճեմարանը օգտված է ձեռնհաս դասախոսությունները. տալիս ենք նրանց անուն-ազգանունները և դասավանդած առարկաները։

Արևելյան գաղութներին ժանութ պրոֆեսոր-գոկտոր Նշուտ Արքահամյանը դասավանդում է հայոց պատմության աղբյուրների ուսումնասիրությունը. Պրոֆ. Լևոն Սիմյոնովը դասավանդում է տոմարագիտություն։ Վերատեսուչ Մ. Մինասյանը անգերեն լեզու Ֆիլոփոփիական գիտությունների թեկնածու Արմենակ Պողոսյանը ավանդում է հայոց լեզու, լեզվի տեսություն, հայ լեզվի պատմություն, գրականության տեսություն։ Մանկավարժական ինստիտուտի ասպիրանտ Միհրան Գամաղելյանը՝ Հոգեբանություն և լոգիկա։ Դիտությունների ակադեմիսիայի Պատմության ինստիտուտի ասպիրանտուրան ավարտած Սուրեն Ավագյանը՝ նոր պատմություն, փիլիսոփայության պատմություն։ Խոսական Մանկավարժական ինստիտուտն ավարտած և նույն ինստիտուտի դասախոսներից Ելենա Թումանյանը՝ ուսուց լեզու Վաստա-

կավոր ուսուցիչ Հրանդ Քոշարյանը՝ մաթեմատիկա և ֆիզիկա: Երևանի Մանկավարժական ինստիտուտն ավարտած Արմեն Միհականը ինստիտուտում ավարտած Հրշանի Հայ գրականությունը և ոռու գրականությունը: Ճեմականությունը և ոռու գրականությունը:

Վաժարանություն, Հիսուսի Կյանքը, կարգատվածաղաշտության, քրիստոնեական վարդապետություն:

Արմեստի գաստակավոր գործիչ կոմպոզիտոր Դանիել Ղազարյանը և Տեր Նիկողականությունը:



Զենքադրված հինգ սարկավագներ

բանավարա, երկարամյա մանկավարժ Անուշավան Միքայելյանը՝ գրաբար: Զմմարի սեմինարիայից, Ֆ. Բորջանյանը՝ կրոնների պատմություն և Ս. Գրոց մեկնություն: Անթիլիասի գործանքից շոշանավարտ Հայրենակարձ Եղիշե Վարդերեսյանը, Սուետիացի Հայտնի քահանա Տեր Վարդանի որդին, ավանդում է Հայոց եկեղեցու պատմություն, աստ-

յուս քհ. Բավեյանը՝ երաժշտություն: Ճեմարանը ունի նաև իր մշտական բժժիշկը, հանձնիս բժ. Աշոտ Մողեղյանի: Որը ամեն առավու այցելում է ճեմարան և հոգ տանում սաների առողջությանը, և պարբերաբար առողջաբանական նյութերի շուրջ զեկուցումներ է տալիս նրանց: Մրագրով նախատեսված էր, որ ճեմարանն ունենա երեք դասարանական և երեք

լոարանական կուրս։ Կրթեական այս նոր տարեշրջանին նա ունի արդեն իր լսարանական երկրորդ կուրսը։ Գալիք տարի կկազմվի նաև երրորդ և վերջին կուրսը, և ծրագրի բոլոր նախատեսությունները լրիվ կենսագործված կլինեն։ ճեմարանը կերպողանա տալ իր անդրանիկ հունձքը՝ Մայր երկրի հողին վրա, դարավոր Մայր Արքով ներշնչող միջավայրում պատրաստված, բնատոհմիկ առաքինություններով օժտված և բարձրագույն ուսմամբ զինված երիտասարդ կրոնավորների առաջին հուլլը։

Արդեն լսարանական առաջին կուրսն ավարտած սաներից Հինգը հունիսին սարկավագ են ձեռնադրվել Ուժիշներն էլ զիմում են տվել և շուտով տեղի կունենա և նրանց ձեռնադրությունը։

Սաների մեջ զգալի տոկոս են կազմում Հայրենադարձներուն նրանք թվով 14 են—կան Սիրիայից, Լիբանանից, Պաղեստինից, Իրանից, Ֆրանսիայից և Սփիստոսից ներգաղթածներ։ Մեկ քանին արդեն նախկին սաներ են նրուսաղեմի ֆառանգավորացին կամ Անթիլիասի դպրեանցին, այնպես որ հեշտ եղավ նրանց տեղավորումը համապատասխան կուրսերում։ Սաների մեծագույն մասը՝ Հաւաստանից, Վրաստանից, Հյուսիսային կովկասից և Լեռնային Ղարաբաղի ավտոնոմ շրջանից են։

Նախկին մատենադարանի այս շենքը բայց առաջ սահմանական է ձեր բույրը պահանջներին, — Հարց հնք տալիս վերատեսչին։

— Երիշ. բայց շարժեք, թե միայն այս շենքն ունենք մեր տրամադրության տակ։ Այստեղ գտնվում են լսարանները, հանդիսությանց դահլիճը և գրադարանը։ Վեհափառը ճեմարանի տրամադրության տակ դրած է նաև նախկին Սինոդի շենքը, որտեղ գտնվում են մեր ասաների ննջարանները, ճաշարանը, խոհանոցը և այլն։

Վերատեսչի առանձնասենյակում կան կողք-կողքի երկու խոշոր ապակեալատ պահարաններ՝ իրու ավելի քան 1000 արժեքը գործերով։ Նայում եմ գրքերին և ասում։

— Երկի այս է ճեմարանի գրադարանը։

— Օ՛, ո՛չ— պատասխանում է վերատեսչը։ այստեղ են նորերս մեր ձեռք բերած գրքերը։ Մեր գրադարանը առաջին հարկումն է, նախկին պատկերասրահի բնդարձակ դահլիճում։ Այնտեղ կան 10.000 հատոր։ Քիչ հետո կտեսնեք։

Վերատեսչի հետ մտնում ենք երկրորդ լսարանի ընդարձակ սենյակից, որտեղ կան մեկ ասանյակ տաներ։ Ամբոխի վրա է գրաքարի դասախոս Միքայել Ալանցի։ Սաներից մեկը կարդում է Եղիշեի ռական Վարդանանց և Հայոց Պատերազմին։ Մատյանից մեկ հատված,

թարգմանում, վերլուծում քերականդրեն, բացատրում մեծ հմտությամբ և ինքնավաստահամբ։ Մյուսները՝ հակված իրենց գրքերի վրա, հետևում են տող առ տող։ Հետո ուրիշները իրենց հերթին կարդում են, պատասխանում դասախոսի հարցերին։ Ուսնողները կարդում, թարգմանում ու բացատրում են այնքան լավ, որ դասախոսը շատ հազարեալ միջամտելու տեղիք է ունենալու ուղղելու համար նրանց։ Եղիշեի պերճ ու հանդիսական դրաբարը շատ հաճելի է սաների բամբ ձայնովը, վճիռ առողանությամբ և ճիշտ շեշտավորմամբ։

Հրաժեշտ ենք տալիս դասախոսին և սաներին, իշնում ենք երկրորդ հարկը և մտնում ճեմարանի երրորդ դասարանը, որտեղ այդ պահին հայոց լեզու է դասավանդում երիտասարդ դասախոս Արմենակ Պողոսյանը։

Քիչ հետո առաջին հարկն ենք իշնում Ահա հանդիսությունների ընդարձակ ու շքեղ դահլիճում ենք. որմերը զարդարված են Վեհագործ Զ.-ի և ուրիշ հիմն կաթողիկոսների մեծաթիր դիմանկարներով։ լուսանկար կամ յուղանկար։

— Այս դահլիճում, — շարունակում է վերատեսությունը՝ հավաքվում ենք պարբերաբար և ունենում հանդիսություններ։ Պետական տոներին, Վարդանանցին, թարգմանչաց տոնին և զանազան մեծ գրողների և արվեստագետների հորելյանական հանդիսությանց առիթներով։ սաները ունենում են ելույթներ, կարդում ինքնագիր բանաստեղծություններ, և ինքնուրուցն զեկուցումներ և այլն։ Վեհափառն անձամբ ներկա է լինում մեր երեկույթներին և քաջալերում սաներին։

Ահա նախկին ճեռագրատան հարակից մեծ դահլիճում ենք։ Գրքերով լիքն են պահարաններու. գրքեր կան զրված սեղանների վրա։

Շենքից դուրս ենք գալիս և սաղարթում ծառերով եղերթած ծառուղիներով գնում ենք դեահ նախկին Սինոդի շենքը։

Մտնում ենք խոհանոց, որտեղ խոհարար վարպետը, օժանդակությամբ մեկ քանի օդնականների, կեսօրվան ճաշն է պատրաստում, խոշոր կաթսաների առաջ։

— Ամեն օր, բացի չորեքշաբթի և ուրբաթ օրերից (պահքի օրեր), մսեղեն ճաշ ենք տալիս, առաջ հացով և մրգերով, — ասում է վերատեսությունը։

— Սաների առողջ դեմքերից և կազմից ակներեն է, որ ստանում են որակով և քանակով լավ սնումդ, — խորհրդածում եմ ես։

— Միայն այդ չենք նրանց առողջության պատճառը, — բացատրում է վերատեսությունը, — շատ ժամանակ չէ, որ նրանցից ոմանք վերադարձել են Գեղարդից, որտեղ անց են կաղորեկ ամառային երկու ամիսները։

Այցելում ենք սեղանատունը, ննջարաննե-


ը՛ը և հիանում ամենուրեք տիրող մաքրությամբ, կոկիկությամբ:

— Արտասահմանյան թեմերը օժանդակում են ճեմարանին, — հարցնում ենք վերատեսչին:

— Ետք թիշ, եթե չհաշվենք այս ննջարանի սարքավորումը և որոշ շափով հագուստեղենն, կարող ենք սաեւ, որ համարյա ոչինչ լինք ստանում, թեև սաներ պահել խոստացած անձերի անունով մենք պահում ենք սաներ — ու-

գումարին պարզեց ճեմարանը վերաբանալու իր ծրագրերը...

Վեհափառը իսկուն և եթ կատարեց իր խոստումը. դեռ այդ նույն 1945 թվի աշնանամտից բաց արեց ճեմարանը, որը այս տարի թեակոխում է աշա իր գոյության հինգերորդ տարին և շուտով կտա իր անդրանիկ հումքը: Դասախոսական և վարչատնտեսական կազմի ոռնիկները, սաների սննդյան, Հագուստեղենի, կողկեղենի և այլ ծախսերը,



եղմիածնի Հոգեոր ճեմարանի II լսարանի մի խումբ ուսանողներ ճեմարանի գրադարանում պարապելիս:

Նենք Գարակյուղյան սաներ, Հայկ Գավուքճյան սաներ, Ամերիկայի արևմտ. թեմի սաներ, Կալիֆորնիայի սաներ, Եղիայան սաներ, Ճանիկ Զագրը սաներ և այլն, և այլն: Ունենք նաև նոր նախիչևանի թեմի անունով վեց սաներ, որոնց համար հարկ եղած գումարները պետք է ուղարկվեն Հնդկաստանից՝ ատենոք նոր նախիչևանի համար կատարված Մասեւթարշանյանի կտակի հաշվին:

Լսելով վերատեսչի այս խոսքերը, շեմ կարողանում թաքցնել զարմանքաւ:

Վերհիշում եմ այն խանդակառությունը, որ ցույց տվեցին արտասահմանյան թեմերի ներկայացուցիչները և այն խոստումները, որ պեցին, երբ Վեհափառը 1945 թվի Համա-

ճեմարանին տրամադրված ավտոյի և մեքենավարի ծախսերը, գրենական պիտույքների ծախսերը և այլ շատ ու շատ ծախսեր հոգացվում են Հայաստանի և Հարեւան ուսապուրիկաների թեմերի հավատացյալների կողմերի, իսկ արտասահմանի բազմաթիվ թեմերը գիշ ծանրություն են վերցնել իրենց վրա.... Արդար չէ ճեմարանի, «եղմիածն» ամսագրի և եղմիածնի միաբանության մյուս բոլոր ծախսերը ծանրացնել միմիայն արևելահայ: Թեմերի վրա:

Ճեմարան վերադառնալով, ցանկություն եմ հայտնում անձամբ ծանոթանալ սաներից մեկ քանինի հետ և նրանց հետ գրուցել: Վե-

ռատեսուշը ինձ մոտ է ուղարկում մեկ քանի սաներ:

— Մենք Տ. Հայկ Գալուքճյանի սաներն ենք, — հայտնում են երեք պատանիներ, — ներս մտնելով տեսչարանից և ծանոթացնելով իրենց, ահա նրանք:

Արմենակ Գրիգորյան, էջմիածնի շրջանի ներին Ձերմա գյուղից: Ավարտել է էջմիածնի Միկոյանի անվան լրիվ միջնակարգ դրա-
ռոցը և մտել ճեմարան:

Փայլակ Այնթափյան, բնիկ Սուետիայի Վագրֆ. գյուղից, ներգաղթած Միրիա-Լիքա-
նանից: Հայրենիք գալուց առաջ շորս տարի սովորել է Երուաղեմի Ժառանգավորացում: Ունի գրական ձիրք: Գրում է գողարիկ բա-
նաստեղծոթյուններ, որոնցից մեկ քանիսը երևացել են «էջմիածնին» ամսագրում Փայլակ Միածնա ստորագրությամբ:

Մովսես Ղազարյան, Քեսապցի, ներգաղ-
թած Միրիա-Լիքանանից, սովորած Երուա-
ղեմի Ժառանգավորացում Փայլակի հետ:

Մանոթանանք Ամերիկայի արևմտ. թեմի սաների հետ.

Ռուբիկ Մարտիրոսյան, Երևանցի, Արով-
յանի անվան դպրոցից: Հոմիսին սարկավագ
ձեռնադրված հինգ սաներից:

Քաջիկ Գևորգյան, Դարաւագյացի (Միկո-
յանի շրջան), սովորել է Երևան, Թումանյանի
անվան լրիվ միջնակարգ դպրոցում: Մարկա-
վագ է ձեռնադրված:

Այս երկուան էլ տնեն գրելու շնորհ և մաս-
նակցում են «էջմիածնին» ամսագրին, որտեղ
տարագրի: Էին և հրանց պատկերները:

Ահա և Տ. Ճանիկ Չագրի սաները.

Անդրանիկ Գալեմդերյան, Քեսապցի, ներ-

գաղթած Միրիա-Լիքանանից, սովորած Ան-
թիլիասի դպրեկանքում, սարկավագ ձեռնա-
դրված է ս. թ. հոմիսին:

Մուրադյան Գուրգեն, էջմիածնեցի, սովո-
րած Միկոյանի անվան դպրոցում, երկրորդ
լսարանցի:

Շոտով վերատեսուշը ներս է գալիս երկու
սաների հետ.

— Խնդրեմ ծանոթացեք, սրանք էլ ձեր
գավառից են — Սուետիա-Քեսապ շրջանից
յոթ սան ունենք, այսօր երկի բավականին
առիթ ունեցաք խոսելու ձեր այնքան ինք-
նատիպ և հետաքրքրական գալապարարա-
ռուր, — ասում է վերատեսուշը ժպտալով:

Իննատիս Մարտիրյան, Սուետիայի Հաճի
Հապիալի գյուղից, ներգաղթած Միրիա-
Լիքանանից: Սովորել է Կիպրոսի Մելքոնյան
հաստատությունում և Անթիլիասի դպրեկան-
քում: Մարկավագ է ձեռնադրված: Մասնակ-
ցում է ամսագրին, որտեղ տպվել է և իր
պատկերը:

Ճրանդ Վարուգյան, Սուետիայի Քեպուաիի
գյուղից: Սովորած Երուաղեմի Ժառանգավո-
րացում:

Ցանկալի էր ինձ մեկ առ մեկ ծանոթանալ
նաև մյուս սաներին, հատկապես Եղիպտոսից
ներգաղթած երեք սաների հետ, բայց այսօր
ոչ է, որոշել եմ գալ մի ուրիշ անգամ:

Վերադառնում եմ Երևան լավագույն տպա-
գրություններով: Ճեմարանը կրթական-բա-
րուական լավ է հիմքերի վրա է դրված: Մնում
է նյութական հաստատում բազա ստեղծել
նրա համար: Դրանում՝ որոշ դեր վերապահ-
ված է Սփյուռքի թեմերին:

